

# Ք Ն Ն Ա Կ Ա Ն

## ՄՈՎՍԻՄԻ ԽՈՐԵՆԱԳԻՈՑ

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԶԱՅՈՑ

ՈՒՂԱԳՐԵԱԼ ԵՒ ԵԱՆՕՐԿԲԱՆԵԱԼ

(Ըարունակութիւն. Ե. Բ. 83)

*Res ardua est vetustis novitate dare, novis auctoritatem, ... obscuris lucem, ... dubiis fidem.*

*Plinius.*

(Գործ դժուարին է վաղեմաց սուղ նորութիւն, նորաց խորութիւն, ... նեմաց լոյս, ... արակատեսեաց սոսքութիւն, Պլինիոս) :

Տող Ե. — Տպագիրն (Ըստ գրչագրաց) ունի « շնորհացն », ուր շարձեալ շիմորոշ յօդոյ անշարժութիւն, ինչպէս տեսանք 4<sup>րդ</sup> տողին վրէ, որ գրչաց է. զի նախընթաց անականն ունի շխարհորն, որ Ենթակայ գաղափարին մասնաւորութիւնը և մեծութիւնը յայտնելու համար է. կրկնելն զայն աննշարժացութենէ և շանդաղութենէ ի զստ, որ խորենեան արագընթաց գրիչը կը կրկնէ, վրայակ Ենթադրութիւն վը ընել կուտայ որ աննշարժութիւնը յարաբերական վը պիտի յարորդէ : — Իսկ մեզ բաւական համարուի առ անգամ մի ըսել աստիճ որ պարտաւին խանգարեալ և անխանգ գործածութիւնք որ յանախ կը տեսնաին մեր հնարքոյն իսկ նախնեաց Գրաւանոց վրէ, (Բաց յոմանց թերևս, որոց

սրբելի են զեղծ արործակչք անձնագրի յորդաբանութիւնք), յե-  
 ժառ մասաք անմտադիր գրչաց զեղծմունք են ի ձեռագիրս սպր-  
 դեալ . յայտնի կ'ըլլայ այս երբ գրչագիր ընդ գրչագրի բարձրա-  
 անկք , ուր յաշակարհիս պարբերութիւնք այդ ն տառին վրայ  
 են : Խժբժութիւնն չերեւի մեր այս մանրակոշ գիտողութիւնք . ք-  
 նի՛ ծանր վիճեր յուզուած են այդ մանրիկ մասնիկաց պատճառա-  
 ւետեանք են նախնեաց մատենագրութեանց պարսպոցք : Սոսանայր  
 չեմք որ լեզուակամ և քերականական տարերք , որք իմաստ մը բա-  
 ցայտտութիւն և ազգութիւն տայր համար ստեղծուած են ,  
 երեւց պաշտօնին դէմ կը թերանան , և փոխանակ պայծառու-  
 թեան , մթութիւնն հուտան , երբ յանդէպս գործածութիւն : Սեր  
 ընտրելագոյն մատենագիրք , հմուտք լեզուին քան զլեռնագոյնն ,  
 շատ զգոյշ են յայդմ մասին : Ինչպէս Սուրբ Գիրք , և ի նմա  
 յիշեմք ի մասնաւորի իմաստութեան գիրքք , որ վերացեալ գա-  
 շափարքք հիւսեալ գրութեանք մը ըլլալովն , դուռ ուրեք և հր-  
 կարեոր պահանք կը գործածէ այդ մասնիկները :

Տող 8-9. — Յառաջ քան զմարմնոյդ՝ զհոգւոյդ ընկալեալ  
 զճանօթութիւնն՝ ըսել հարկ չե՛մ տեսներ թէ այսո՞ւ բանի- յայտ  
 կ'ըլլայ այն կարեոր և մեջ ի յուրի պահելի պարագայն որ Սու-  
 հակ և խորեմացի զիրար տեսած չէին և թէ իրարմբ բացակայ  
 գտնուած՝ ձեռնարկեալ գործոյն վրայ թղթով կը խորհրդակցէին  
 մինչև օրատմագրութեանս իսկ վերջը , զի վերջին գլխոց միոյն մը  
 ալ կը տեսնեմք (Գ, կէ) որ դեռ իւրեւ սա հեռուսոր քի կը խ-  
 սի օրատմագիրն , և նորա ստիպմանց դէմ զիւր ձեռութիւնն և  
 հիւանդութիւն և անպարսպութիւնն ի թարգմանութեանց

կը յիշեցունէի, պատմութեան խաբէն խոտորելով: - Ուստի այս բովանդակ պարագայք անընդունելի չ'ընեն Գրեթորե Սարկաւագապետի (սա Ռուսիները ոմն, ինչպէս կը խաբոն-ի) ըստէն խորհեմեան Բացատրութեամբ մը թէ խորհեացի "արող քարտուղար" եղած էր Սահակայ (Ներսող. Ի. Գր. լուս), ապա թէ ոչ ըսելու եմք որ Սարկաւագապետը զատ ընդարձակ մտք չը հասկանայ քարտուղարութեան գործը:

Տող 9-10. - «Որ եւ սիրելի<sup>\*)</sup> իմոց ախորժակացս է, առաւել եւս սովորութեանցս.» Պատմագիրս այսու բանիւք կը յայտարարէ մեզ որ իւր մատենագրական աղետութեանց մէջ նաև պատմական ուսմամբք կը պարսպէ: Իւր բանից անկեղծութեան անմիջական սպասոյցն՝ նոյն իսկ Սահակայ Բագրատունւոյ առնա դիմելն է իւր փոփափած պատմութեանը համար, առանց իսկ զնա անձամբ չ'անջնայլա: Այս պարագայն հաւանական կ'երևցունէ մեզ որ Սահակ լուս առած էր թէ մատենայած ժերուհւոյն ձեռքն անցած էր Սարիբաս անուն Ասորւոյ մը գրիւթ: Եւ գուցէ իսկ սա այս կ'անհարկէ խորհեացւոյն զանձն ջատագովելն յազորդ գլխոյն մէջ թէ սա ինչ յունական աղբեղց պիտի դիմէ, ուղղելու համար Սահակայ գաղափարը թէ Ասորի մատենիւք պիտի գոհանայ յիկայք մը եւ դիտելի է որ Ա, Ե գլխոյն մէջ կը յիշէ զոմն «ուղմագոյն և ընթերցասէր Ասորի» առանց անունը տալու, իբրև ճանօթ իւր Մեկենասին:

\*) Յել 86 վիմագրողին ազգէն վերայած է այդ «սիրելի» բառը:

Բայց հանդերձ այսու մեր հասանափանազոյն և մեր շահաւէտագոյն տնթարարութիւն մը կը գողալի մէջ թէ ինչն Սահակ կը զիջէր առ մեր ճերմակներն: Այն է թէ խորեանցի ժողովրդական համբաւ ստացած էր իբր պատմաբան և պատմագիտ: Բայց այս համբաւը, որ չէր կրնար նրբ լլակ, իւր Թարգմանական աղետաբեանն անշուշտ հաշտութեամբ էր, և ոչ թէ ինքնագիր հեղինակութեամբ<sup>1)</sup>: Բանդի իւր հնագոյն յորջորջանաց անուանքն եղած են՝ «Փիլիսոփոս» ըստ Պաշար Փարսեցւոյ (Թուղթն առ Վահան), զի և ոչ զայս պատմութեան գիրքն տեսած էր, և համ ըստ Յովհաննու Իմաստասրի «Մեծն իմաստասրաց և հաշտեալ ընդ տիեզերս»<sup>2)</sup>, ի կարգի եղնոյն և ընկերացն («ըստ նոցանէ և ոչ հետի ի նոցանէ»), զնա «արուեստաւոր Թարգմանիչ» կ'անուանէ (Ճառ ընդ Ե. Երևանի):

Թիէ կային իրաջ խորեանցոյ բազմազան Թարգմանութեանց մէջ նաև պատմականք, չիք տարակոյ: Նախ և առաջ փոթմաբ ըսելու որ այդ Թարգմանութեանց մին է՝ նա ինքն պոմեան խորեանցի վէպին մէջ վան զլաին աւելի աղմուկ յարոցանող մատենան «Փոքր Սոհրատ» անուանեալ. անշուշտ տարրիկակ կարծիք մը պիտի երևի բազմաց, բայց զայսմանէ առանձինն պիտի չառեմք:

1) Հախառակ օրինակ չբերուին մեր Թուղթի պարմաբան Նուրիսիանցի մակագրեալ գրութիւնք, որ կեղծիք են յեանագոյն դարոյ: Սահակն խորեանցոյն հրատարակեալ: Բայց զայսմանէ զարմեալ պիտի խորեանցի ընդ հասց:

2) «Տիեզերահաշտեալ» ըստ Թովմայի Արժարանոյ:

հաց աստի, որչափ կարելի է մեզ գուղակել, խորհեմացոյ պատմական զբաղմանց և թարգմանութեանց գլխաւոր առարկայ եղած են վկայաբանականքը: Յայտնի է ժամանակին ոգին, և իւր իսկ եկեղեցական վիճակ: Արդէն իւր սոյն այս դաստնութեան մէջ տեղ մը յայտնի կը տեղեկացանէ (հ, հե) որ իւր պատմութեան իբր ազնու-ւթ պիտի ծառայեն այն վկայաբանական մատենն, որ յանուն փերմեղիանու իւր ձեռքէ անցած էր, թէպէտ և կը խոստովանի ինք թէ առ հարկէ և շփամարութեամբ, յայտնի տեսնելով ի նոսա խառնախօսութիւն և անուանց և ժամանակաց անձըրութիւն: Ի կարգի այս աղխատութեանց եղած է վկայաբանութիւնքն Աստուծոյ և ի աստեանց և Ոսկեանց զաւանակից, որ հասարակութեամբ ի Ասիայն Հայնիւն, Հ. Ա. ժ(Թ):

Թիէ այդ պարագանց մէջ կը հաւաքելու մասնագումայն հըմտութիւններ, վերաբերեալ էթէ՛ ազգային և էթէ՛ արտաքին պատմութեան, յայտնի կ'ըլլայ մեզ նախ այն առատ յիշատակութիւններէն օտար պատմիչաց անուանց, գլխաւորապէս յաւանականաց զորս իւր դաստնութեան անձուկ սահմանին մէջ կ'ընէ խորհեմացի, պատրաստ գտնուելով անակնկալ պարագային, որ իւր առջին եղած էր յանկարծ հազրատունոյ մը առաջարկութեամբ:

Արտաքին պատմիչաց անուանց մէջ կը գտնուին և այնպիսիք, որք ցարդ ունայտ մնացած, կարի օգտաւէտք են արգի գիտնոց

1) Ոմանք ի ժամանակաց կը համարին թէ խորհեմացոյ պատմական թարգմանութեանց մէջ շատելի են վաթ Աղտիւնաշքէ և Եւսեբեոսի փրոնիլոն. բայց մէջ ցարդ շտա համոզուած լինք այդ կարծեաց: Մտնական շարժել, որ մեզ միակ առաջնորդն պիտի լինի այս խորհոց մէջ, ցարչապէս ուրիշ պատմական հաւաստիք կը պակասին, չեմք տեսնել բնաւ նմանութիւն այդ գրութեանց և խորհեման անխափածելի գրութեանց մէջ:

անգամ: թի այդ պատմւոց բնագործք և ուղղակի իւր ընթաց-  
մանց քիւթք եղած է՞ թէ ոչ, այդ մեր խորհրտածութեանց հա-  
մար երկրորդական խնդիր է. շատ է տեսնել որ հմուտ էր այդ  
պատմւոց և կամ անոնց աղբերացը, յորոց զայնս իւր վարչէր կամ  
հ'ուսանէր, և յարգ կուտար, իբր ԳԻԹ լուրջ ընթերցատէր:

Ինչպէս արտաքին պատմութեանց և պատմւոց, զնոյնը ըրած է  
և ազգայնոցն համար: թի ազգային պատմւիչք և գոհացուցիչ  
աղբերք իւր պահանջին, իւր պատմութեան՝ յառաջաբանական պա-  
տասխանւոյն միջ ցառով և գրեթէ զայրացմամբ իսկ իւր յայտնէ-  
առ իւր Մեկեման, իերպիւ իմ յուսրեալ ձեռնարկութեան մը  
առջև յոր հրահրուած էր, և զոր խղճի մտքը հ'ուզէր կատա-  
րել. այդ ևս իւր հմտութեան անպացոյց մի է, համայն և այնպէս  
այդ երազտ սահմանաց միջ քաղած ամբարած էր ինչ որ նմա  
կարելի էր հասաքել, այնպէս որ, ինչպէս պիտի տեսնեմք, անդէն  
իսկ ի սիզբանէ գործոյն, եւր ստիպուած էր մասն առ մասն զլա-  
րագործան հետզհետէ յղել առ իւր անհամբեր խնդրողն, զանց  
չընէր մերձ ընդ մերձ ըստ դիպել պատեհին ապագայ պատմ-  
ութեանց կանխու իսկ յիշատակել: Օրինակի յաղագս, Ա գրոց միջ  
իւր յիշատակէ զվարած պատանին և կամ զժրուանդ, և, որոց  
խօսքը յետոյ ըստ կարգին պիտի ընէ Բ գրոց միջ, — պարագայ  
մը որ իւր ցուցնէ թէ ինչպէս ընդելացած և իւրացուցած էր  
զիւր պատմութիւն, և ոչ թէ, որպէս ուղեցին անմաք կարծել, այն-  
պէս իւր հիւստէր զիւր պատմութեանը, ինչպէս վիպագործ մը (roman-  
cier) իւր հիւստէ, յատակագրած մը դնելով կամ ոչ, առանց կան-

Խառ Խ-ը Գրեյթը Գրեյթը որոշ, Էստիկանց հը հանի Խը Գրեյթը,  
 և հը ստեղծի հը հիսուս հետ զհետի վեպեր, արհամաներ, ար-  
 սարաններ, Ինչ որ Խը շրջակայից կամ օգոյն ազդեցութիւնը  
 Խը երևակայութեանը վրայ հը ներգործեն. զի արարներ պատ-  
 իեր չեն ներկայացուներ մեզ մեր արդի քննադատներէն ոմանք,  
 երբ մեր պատմչին այնպիսի յատկութիւններ կ'ընծայեն և մակրի-  
 ներ հը նուիրեն, որ այդ խօսքերը կրող իսկ թղթոյն պատիւ չեն բերեր:

Համարումս այստ անտ-թեանքս, որոց մը կարծեմ, ոչ երևակայա-  
 կան և ոչ չափազանցեալ էնթադրութիւնք կան, ստոյգ կ'ըլլայ որքան  
 մեր Էտրանայն իւր անձին համար ընծայած վկայութիւնը թե  
 արդարև պատմականք և զբաղելն և աշխատասիրելն սիրելի  
 էր Խը արտաբանացը, նա մանաւանդ սովորութեանցը: Սակայն  
 արդար լինելու համար արժան է խօսողանել մեզ այժմէն, որ  
 զի-ը այդ զբաղումը է Գործ հը Գնիւր, ոչ իբրև արտեստ,  
 այլ պատահական ընթերցմանք և Թարգմանութեանք, և  
 էր արդարև, ըստ Խը իսկ բացարձակութեան կերպ մը ձևոյն,  
 ասելի «սիրող» (amateur), ասելի պատմաւոր, քան թե լրջօրէն  
 դաստիարակեալ և կրթեալ «պատմագիտ կամ պատմագիր»:  
 Խը Էտրանը յաճած պատմական մատենք՝ որոց որչափ աստիճան  
 հը ներդին իրեն հանդիպիլ աշխարհի մը մէջ, ինչպիս էր  
 Հայաստան, որ է բացեայ հեռի և մեկուսի հը Գտնուէր  
 Գրանական կեդրոններէ և մանաւանդ մատենադարաններէ,  
 ոչ այլ ինչ էին, ինչպիս անսանք, Բայց սրբոց վկայաբանու-  
 թիւնք, իբր բարեպաղտ եկեղեցականի մը յանկաօոյն, և

կամ ժամանակին ժողովրդեան ոգւոյն ակործանօրն ընթերցուածք,  
 և յարուսքին պատմութեանց ալ զժբարդաբար այնպիսի հե-  
 ղինակութիւնք, որ անկեալ դարու, ինչպէս էր իւրն, ծնունդ  
 որք էին, ջանգեալ մէկ կողմանէ հրաշալեօք և առասպելա-  
 բանութեամբք, և միւս կողմանէ՝ տհաս հմտութեամբք լի և  
 իտանուղիօթ ժամանակագրութեամբ, անուանց և իրաց ընդ-  
 իրեարս շփոթմամբք, շատ անգամ՝ ի յիդոլութենէ հաւաքեալ  
 և կամ յանհաւատարիմ վիպից, առանց բանաւոր քննութեան  
 և հղաարատութեան. բաւական է առ այդ ի միտս բերել  
 այդ դարուց նոյն իսկ յոյն և լատին պատմիչները, յորս առ-  
 փառք ոմանք կը գտնուին որ դարուն այդ համաճարակ հի-  
 սանդութենէն բռնուած չըլլան: Եւ կրկին զժբարդութիւն  
 կամ անկումն, որ ժամանակին ժողովուրդն ալ, մինչ նաև բա-  
 նասէրք կարծես աւելի յարգ և սէր կ'ընծայէին այդ առ-  
 սասպելաբան և ստորին հեղինակութեանց, — ինչպէս եղած է  
 է ժամանակ ըն նաև յԵրուսա ի միջին դարս, — քան թէ  
 լուրջ և բարձր մատենագրութեանց: Կը սիրէին աւելի մեծին  
 Աղեքսանդրի վարքը Ասոյն կալիխթենեայ էջերուն վրայ ընթե-  
 նուլ և զայն ընդօրինակել, քան թէ Կղմարիտ կալիխթենեայ,  
 որուն գործը բազումքին անհետ եղած է այժմ: Այդ ցաւա-  
 լի հոսանաց մատենալ կ'ընթանար և մերս խորեանացի, ինչպէ-  
 և մերքս առհասարակ, թէև կորովի «արուեստաւոր Թագմու-  
 նիչք», և կարծես զայդ բանի ակամայ միման և ինքն իրազնաց,  
 կը հառաչէ Յոբական դառնութեամբ, «Մի՞թէ մատենն մերձ  
 կայցէ՞ր ինձ», (Ա, Գ), և կամ ընտիր պատմիչաց տէնչիւ, զորս

գիտէ զանազանել յայնց զորս ի ձեռին ունէր, թէ քանակն ոչ մաստնագրութիւնքն իրողորի» . (Գ, ա) :

Վերջապէս մերս խորհուցի թէև պատմական գիտութեան քրեոր հմտութեանց և պայմանաց միջ թերի և անուսումն, — թէև տեղ մը կը չգտնի, իբր իւր անձնագան պատուոյն արատ, մերժել զան յիշագի, — սակայն և այնպէս իւր այս իւր մաստնական միջ կը փայլեցունէ ջարմանալի կերպիւ բնատուր յարմարութեան և այնպիսի իսկ ձիրքեր, որ անձնաբարձը պատմագրի մը յատուկ են: ընեմք իւր տեղ տեղ յայտնած անձնուղիղ դատաստանները և գործադրութիւնները, ճոյն իսկ պատմական արուեստին վերաբերեալ, բաւական ըլլայ մեզ առ այժմ ի խորհրդածութեան առնուլ իւր պատմական ոճն և ընթացք. զի ոչ միայն, հանդերձ իւր վրէպակօքն, արամաբան է, գեղեցիկս կ'աղևաղիտ ընդ իրեարս գէպս ընդ գիպաց, այլ և իւր լեզուական կատարեալ և առատ հմտութեամբն նպաստեալ, ջարմանալի չարտարութեամբ գիտէ գէպք մը ըստ կամ ընդարձակել, և որ դժուարագոյնն է՝ ըստ կամ և սեղմել առանց բնաւ պատմելեաց յատկութիւնը, առանց մանր պարագաներն անգամ յաչաց վրէպեցուններու, մանրանկար մը ներկայացունելով պանջիւղ իւր փոքրիկ գլուխներուն միջ անձնայն չղրութեամբ և գեղեցկութեամբ և զատկուուն կենդանութեամբ. զիս է կարգաւ իւր Ձիրաւեան պատերազմն գլուխը, ուր կարծես նկար մըն է կը բանայ, արագ արագ կ'արզաւէ, մանր գեղեցիկ գոյներով անն

1) « Բայց մի՞ ոք աստանօր անուսումն զմեզ համարեալ բաժնասիցի իմք զանվարէս ոմանս և զտգիտս » . Ա. Բ. :

պարագաները ի՞նչ պատկերացումն է հարձեւս ընթերցողին  
 աչաց չճիւս փայլակ մը փայլատակեցունելով, կ'անցնի յառաջ :  
 Բայց զի ներքին չէ մեզ յերկարել այլ ևս, թէև ամբարք են յեր-  
 կարելիքն, շատանամք Իբրև Զղմարիս և Բասարեայ պատմու-  
 գրի Բնասոր հանձարոյ և ընտրողութեան նշան յիշեցունել  
 լոկ, որ Իբր ազգիւր ազգային պատմութեան Դիմած է ազգային  
 երգերու և աւանդութեանց, առանց բնա օրինակ ունենալու  
 Իւր առջև, և որով եւրոպէ հազիւ այս դարու մէջ արթնա-  
 ցաւ քանոնց ալ կարեւորութիւն տալու, ինչպէս Գրիմ (Grimm)  
 եղբարք գերմանական ազգային երգերն հաւաքելով հրատա-  
 րակեցին. և գրեւէթ թէ այստեսակ հնագոյն երգոց մէջ աներկ-  
 Բայելի Գոհարներ կան մեր ազգային պատմութեան վերաբերեալ :  
 — Կնիք Բանիցս ուրեմն խորեմացի այնքան բնասոր քարտեակն  
 ունեցած է իրք պատմութեան և միանգամայն հանձար, որ զիւր  
 այս անարտեստ (ներսի մեզ ջայս համարձակ ըսել, և այն ի  
 պատիւ մեծի Սատեմագրին) Պատմութեան գիրքը ընթեանելով  
 ցաւ ի՞նչ զգամք թէ առ ինչ այդ հանձարը լաւագոյն պարա-  
 գայից մէջ գտնուած չէ, և կամ լաւագոյն դարու չէ վի-  
 Ճակեալ, ինչպէս ինքն իսկ կ'ըզնայր, զիւր մեծ ներքին ոգին  
 Ճանչնալով կամ զգալով, — թէպէտ և ոչ է կամ ը և կամ  
 մինչև ժիւր դարոց, ինչպէս արդի կարի Գործունեութեան  
 ցուցընող Բնասորաներ զինքը կ'ուզեն պարտել, առ որս կ'ար-  
 Ժէ ճայնել. ի պէն և անդր է Կրեմո, և դասունալ ճայնակ-  
 ցիւ մեր ճերանունոյն յազրոյ Բանից, որ «գովել զգեղ արծա՛ն  
 է » կ'ըսէ առ իւր Մեկեման, որ պատճառ եղաւ Գէթ Իբր

անընդեկ յիշատակ դոյզն նշմար մէ թողլայ մեզ ճշմանս որ  
հանձարներէն միոյն, զորս ճնոյց մեզ մեր դարն ոսկի :

Տող 13. — «ՆՅԹ լամբ բանին եմք, որպէս ասի, պատկեր Աստու  
ծոյ»։ Վիպաութեան բերնաած խօսքի մէ ճի ունի բանս. բայց ուստի  
է այդ հոչումը : ՆՅԹ կայ ըստած այդոս իմաստի- խօսք մէ, Ա. Պրոց  
Բանն է թէ «Արար Աճ զմարտն ի պատկեր իւր» (Ծննդ. Ա, 27), և իրաջ  
յայն կ'ուզէ ակնարկել պատմիչն : Բայց այդ վիպաութեան մեղ բնաւ  
յիշատակութիւն չկայ «լամբ բանին» իմաստին, որ խորեմացոյն մեզ  
նախան յաւելուածն է, որով ըսել կ'ուզէ թէ այդ աստուածային  
նմանողութիւնը նիւթական լի, այլ հոգեկան. մեր հոգւոյ է ու  
թեամբն և նորա գլխաւոր բարեմանութեամբն, որ է «Բանահանու  
թիւն» կամ «Բան» կոչուածը, կը նմանիմք Աստուծոյ. և ջայս «Բանն»,  
իբր կայ կ'ուզէ զնեւ յետոյ ընդ Բագրատունոյն ուսումնասիրութեն  
և ընդ աստուածային կերպարանն<sup>(1)</sup> : Ուրեմն բուն վիպաութեան խօսքը  
յայս կը վերածուի պարզապէս, թէ «Նճք պատկեր Աստուծոյ» : Արդ  
երբ իւր այս մտի ճևոյն կը մտնէ խորեմեան ասացուածը, ինչքին

(1) խորեմացի «լամբ բանին» մեկնութիւնը աւելցունելու թերևս այլ պատ  
ճառ մէ ևս ունի : Զերմ և Բաւական կառուս խորի մէ յուզուած էր  
Որոգիքեան վեճին մէլ, յորում Եգիպտոսի թեթապիեան չգնաւորք,  
Բաւական միամիտք, թիւր իմանալով Որոգիքիմիտ խօսքերը, ինչչպիս նաև  
Ա. Պրոց, որ Աստուծոյ երբև մարդ խօսել և Գործել կուտայ, զմարդոյ  
ընդ Աստուծոյ կերպարանակցութիւնը ըստ նիւթականին կ'առնուին, —  
Քաղաքիար մէ որ երեւց չգնաւորական ժողկայութեանց և խիստ պա  
հեղողութեանց յարմար կուգար, իբր թէ այդ զգիմանիմք աւելի նման  
կերպ մերձատրութիւն մէ կ'ունեմային իրենց նախասոյին : «Մարգարայա  
կան» անուն տրուեցաւ այս ճև աստուածաբանող խմբին, որք ոչ այնչափ  
զմարդ Աստուծոյ, որչափ զԱստուած մարդոյ նմանել կուտային : Անձա  
նօթ չէր խորեմացոյ այս տեսութիւն, և ոչ ալ հնացեալ. Խորոյ դարուն  
եմն կ'ուսմ չիղոս պիղքները կը կատարուէր այս վեճը : Ազգասանդրիս և  
ի կուսանդանուսոյն Յովհան Ոսկեբերանի ժամանակ : — խորեմեան մեկն  
ութեանը նաև յագաթագեղարի կը հանդիպիմք ընդարեանկազոյն ճևով (ԵՂ  
198 — 202) :

Կարճե՞մ ի յայտ հուգայ որ այսպիսի վճռական, մեղուսի և իբր առած  
 ի վեր բերուած խօսքի վեր ներելի է՞ Եմք Կարևոր Քայլը Թողուլ և նորա  
 տեղ մեք Կարդալ, ինչպէս իւր հրամայե՞ն Քրիստոսի, առնողելի կա-  
 շացունելով խօսքը, և զայն համարիլ իբր խորեմացոյն հարազատ  
 գրուածը. — նա որ գիշ վր Եմքը, ուր որոյն զեղջման ձևը Կարելի էր յար-  
 մարացիս գործածուիլ, ըսած է. « Զի Թեպէտև ածու փոքր Եմ (Ա,  
 Գ): Ուրեմն զայս վրիպակն ևս համարելու Եմք, ըստ ձարտորին (տես տող  
 4), անոնց Կարգէն, զոր տողորեալ վրիպակ փոխեցինք, այսինքն հասարակ  
 ամեն Քրիստոսաց. քանզի ո՞չ տպագրին (վերնետիեանն ի 1865) այլնմեր  
 ցուած իւր նշանակիտ առ տեղեանն, և ոչ ցարդ հրատարակեալ Քաղղատու  
 Թիւնք, և ոչ իսկ ըմբռնեանն իւր նշանակէն որ փոխանակ մեք ի՞ Եմք  
 գրուած ըլլայ: — Ասկայն Կարելի է այլապիսի ևս ուղղել ընթերցուածք-  
 Թողուլ մեքը իւր տեղն, և Եմքը Բայն աւելցունել, իբր ընդօրինակողն  
 ըին մոտցուած, որով և Կարդալ այսպէս. « Զի եթէ վասն Բանին մեք,  
 որպէս ասի, Եմք պատկեր Աստուծոյ»: Այս ևս հաւանական է և ընդու  
 ների ուղղութիւն, Բայց մեր տեսութիւնը մանաւանդ ձգտմամբ Քրիստոս  
 գրաց անփոփոխի կը մնայ. նախ թէ Եմք վր Կարևոր է, և երկրորդ թէ տո  
 Գորեալ վրիպակ վր կայ ի տեղողոյ այս Կամ այն ձևով:

Այժմ կը մնայ մեզ ուրիշ խնդրոյ անցնիլ, — սխալն Բանինս ընթերցուա  
 ծոյն քննութեանը, զոր ունի այսպէս տպագրին ըստ ընդհանուր Քրիստոս  
 գրաց մեզ Ժանտից, հակառակ ըմբռնեանն Քրիստոսին, որ անկասկա յայ-  
 լոց, « ըստ Բանին » իւր գրէ: Ծարակոյս չկայ որ երկու ընթերցուածք ևս  
 կրնան ընդունելի համարուիլ. վասն ընթերցուածը իւր Ժանտից օրի-  
 նաւոր Գրիցը համար յորում կը գտնուի, և ըստ ընթերցուածը իբր  
 զարտուղութիւնն իւր սովորականէն (որ է առ սեռական հոլովով նշանակել

հոգևոր, գրչ. *selon, d'après*, թրգ. Գէ-Յէ), տալով նմա վասն, է  
 պատշառութեամբ, համար շղանկութեանը, որ և այս օտար չէ խորհեանք  
 լեզուէն. զի թէև յոյժ ցանցատ քան զմեզ սովորականն, բայց Գոր-  
 ձաճած է քանի որ տեղ միայն, որ էն առաջիկայէր. — «Ասէն ջերու-  
 անդայ ըստ հմայից (այս է՝ հմայուած ըլլալուն պատշառաւ) դրժ-  
 նեայ գորով ական հայեցուածով» (Բ, ԽԲ): — «Սիրեմ կոչել այսպէս ըստ  
 քաղութեան, հայի, Արամ, Յիգրան» (Ա, ԼԱ). այսինքն՝ ի՞նչ սիրեմ երեւոյ  
 քաղութեանը կամ իրենց քաղ (ընելոյն) պատշառաւ Ե: — «Քանզի և  
 վերջին նրուանդ և Տիգրան ի սոցանէ՝ ըստ յուսոյ (այս է՝ երեւոյ ակն  
 կալութեանը համար կամ ակնկալութեամբ որ) կոչեցեալ ասեմ» (Ա,  
 ԽԲ). ինչպէս ուրիշ տեղ մալ համեմատութեամբ ըսած է. «Սամսն  
 անուն կոչեցեալ, որպէս սովորութիւն է Հրէից ըստ յուսոյ ջնարեացն  
 կոչել անուան» (Բ, ԺԷ): — «Եւ ի նաւախոջն ընել՝ ըստ խտարունչ օրոյ  
 նմերայնոյն՝ ընկեցեալ ի կրթի ինչ» (Գ, Լ):

Արդ այս երկու գրեթէ հասարակաց ընդունելի ընթերցումոց  
 վրայ մեր տարահոսեալ մտաց ընտրութեանը ընելու միակ ճանապարհն ի՞նչ  
 մնայ՝ լաճերնեան կոչուած գրչագրին բնութեանը, այս է ըսել՝ արժէք  
 քննել. քանզի խնդիրն այս է՝ որ ըստ մեր կարծեաց և համոզման, — ինչպէս  
 ի մեր Յառաջաբանութեան ակնարկեցինք համառօտիւ, և զայն ներկայ  
 աղիատութեամբս հետզհետէ ակտիւ պիտի լուսաբանենք, յոսամ՝ և  
 հաստատենք, — խորհեանք բոլոր Գրչագրիւք առ հասարակ ի միջ սկզբ,  
 նագիր օրինակէ մը սերած են, և թէ՛ միակ ընդօրինակորը դժուարեմտեց  
 գրութեան մը հանդիպելով, (զպատճառն անդ ծանուցած եմք), ըստ  
 և մեճանք աղաւաղմունս մոճած է իւր գրութեան մէջ, ճանաւանդ  
 այն տեղերը, որ պատմական ըլլալով, դժուարութիւն չեն տուած գոնէ

գուշափորէն հարազատ բառը հանել . և այդ աղաւաղմունքը ընդ բո-  
 ժոսքեաց գրչագրաց սերունդն ապահանած են , ինչպէս իւր տեսնելք  
 այժմ , զմոռանալով ըսել որ այդ ապահանութեանց վրայ իւրաքանչիւր  
 գրիչ նորս անտրուցած է անելի կամ պակաս ըստ սովորական օրինաց :  
 Բայց ինչպէս տեղեակ են գիտունք , և մեք ալ պիտի տեսնելք հետզհետէ ,  
 այս գրչագրաց կարգին մէջ՝ շարժունեան ըստած օրինակ , համեմա-  
 տելով ընդ այլոց , շատ տեղ քան զնոսա լաւագոյն և նախադասելի ըն-  
 թերցուածներ կուտայ : Այս բացառիկ երևու-թիւն երկու մեկնութիւն կա-  
 ըող էմք սալ . կամ այն է որ խորեմեան բնագրին վրայ երկրորդ և ան-  
 տելի արթուն և հմուտ ընդօրինակող մը եղած է , յորմէ սերած է այդ  
 գրչագրի , և կամ այդ՝ շարժունեան կ'ըսեմ՝ օրինակին տէրը , ուղղա-  
 գրութիւններ ըրած է իւր խորհրդածութեամբքն և ուղադիր դիտող-  
 ըութեամբ : Առաջին ենթադրութիւնն կրնայ իւր դէմ զայս գլխաւոր  
 առարկութիւնը ըսել , որ իւր ծախագրի օրինակն անտարակոյս դարերու  
 հնութիւն ունենալով , պէտք էր իւր ընթերցման համահայն գտնուէին  
 ուրիշ գրչագրիներ ևս , զոր չէմք տեսներ , և եղածն ոչ լիով համահայն ,  
 և ժամանակօք ոչ զատ հին . որ կրնայ մեզ կասկածել սալ , որ իւրմ հա-  
 նուած ըլլան : Երկրորդ՝ ինչպէս մեկնելու է այն երևույթը որ տագործալ  
 կողուած վրայայօք ինքն շարժունեանն ևս արտացեալ է մի և նոյն ձեռք :  
 — Եթէ փոքր ինչ այժմէն իսկ կասկածուս եմ որ երկրորդ ենթադրութի-  
 նը չըմբարտագոյն ըլլայ , այն է պատճառն որ ուրեք ուրեք իւր յատուկ  
 ընթերցուածոց մէջ կան այնպիսիք , որ թիւր հասկացողութեմէ եղած  
 ուղղագրութիւնք կ'երևին : Ահա այդոց կարգէն իւր կասկածիմ թե-  
 ըլլայ նոյն իսկ այն ընթերցուածն որոյ վերայ է խօսքերնս . այսինքն՝  
ըստ բանեց ընթերցուածը . քանզի այդ խօսքով կրնայ ոչ բանապատմի .

այլ սասցուած, խօսք (ինչպէս՝ «Նշիցի ինչ ըստ բանի քում», կամ «ըստ բանից Առաքելոյն») հասկըցուի: Տեղի կայ կասկածելու որ ըստ բրնձեան օրինակին տե՛րն կամ ընդօրինակող այնու մտք հասկացած ըլլայ բնագրին «վասն բանին» խօսքը, մերձ տեսնելով նմա վիպական խօսք մը, բացայայտել ուղած ըլլայ «ըստ բանին» փոխելով ըսոյն ձև հասանական չեմք համարիւր միւս կողմանէ որ խորեանցի այդպիսի տեղ մը ուր վտանգ իսկ երկօրինութեան «ըստ բանին» ըսելով գործածել ուղեմար ձև մը, որ ինչպէս տեսանք, չորս կամ հինգ տեղ միայն գործածած է ամբողջ մատենին մէջ: Ձայս մեր կասկածն կերպիւ իմն պիտի ամրապնդուի, երբ գամք ծանօթագրանելու 330<sup>ր</sup> տողը — Զանգերն այսու մեր այս խորհրդածութիւնը վերապահութեամբ կ'ընենք և ի կախե կը թողումք մեր բացորոշ վշիտն այս կէտիս վրայ տալու, սպասելով սպասեաց այլընթերցուածոց (variantes) քննութեանց: Միայն առթիւս զայս մատենին ընել կը ստիպուիմք մեր մատենագրական մատեններ հրատարակողներուն, որ անա օրինակ մը (թէ՛ որչափ կարեւոր են ճշդօրին նշանակել այլընթերցուածները ըստ իւրաքանչիւր գրչագրաց, տեսնելով թէ՛ քանի՛ կարեւոր ինքիւններ այնու կը դիւրանան լուծուի: Սոյն առթիւ դարձեալ կը ծանուցանեմք մեր բանասիրաց, որ եթէ ազնուամտութեամբ հաշիւն աշխատութիւն յաննն առնուլ և երեւոյ ծանօթ խորեանցան գրչագրաց այլընթերցուածները իբր ի նպատակ այս մեր աշխատութեան հաշորդել մեզ, գէթ նշանաւոր տարբերութիւնները մեծաւ շնորհակալութեամբ կ'ընդունուիմք զայնս: — Իսկ առ այժմ մեք ալ պարզին «վասն բանին» ընթերցուածը անփոփոխ պահել օրինաւոր և ուղղագրոյն կը համարեմք:

(Չարունայեմ)

ՍՈՒՌԻԱՍ Վ. ՊԱՐՈՆԵԱՆ